

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. մայիսի 2-ի
նիստի /արձանագրություն N 16/

1. Ս.թ. հուլիսի 1-ից ինստիտուտի հաստիքացուցակում կատարել ներքոհիշյալ փոփոխությունները՝
 - 1.1 կրճատել՝
 - 1.1.1 Կարիերայի և պրակտիկայի կենտրոնի ավագ տեսուչի հաստիքը,
 - 1.1.2 ԵԹԿՊԻ-ի գրադարանում՝ գրադարանավարի մեկ հաստիք (Յուլյան Իրինա Ռոբերտի),
 - 1.1.3 Գնումների գծով փորձագետի հաստիքը,
 - 1.2 նկատի առնելով աշխատանքային ծանրաբեռնվածության ծավալը՝
 - 1.2.1 Արվեստի կառավարման և մշակութային քաղաքականության ամբիոնի կարգավարի հաստիքը դարձնել 0,5 դրույք,
 - 1.2.2 Ուսանողական թատրոն լաբորատորիայի դերձակի հաստիքը դարձնել 0,5 դրույք,
 - 1.3 սույն որոշման ընթացակարգային ձևակերպումները հանձնարարել անձնակազմի հաշվառման բաժնի պետ Հ. Եղիազարյանին և իրավախորհրդատու Է. Մանասերյանին:
2. Դերասանական արվեստ մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Անահիտ Անտոնյանի դիմումը մերժել՝ իրավաբանորեն սխալ ձևակերպման պատճառով:
 - 2.1 Կինոարվեստ մասնագիտության II կուրսի ուսանող Գրիգոր Մուրադյանի դիմումը մերժել՝ ժամկետների սղության պատճառով:
3. «Պարադիզ» ընկերության կողմից ինստիտուտին օգտագործման իրավունքով ի պահ տրված կինոտեխնիկայի հետագա գործածության վերաբերյալ կնքել համաձայնագիր «Պարադիզ» ընկերության հետ,
 - 3.1 «Պարադիզ» ընկերության հետ համաձայնագրի կնքման գործընթացի կազմակերպումը հանձնարարել իրավախորհրդատու Է. Մանասերյանին:
4. Ընդառաջել Հայկական ազգային կինոակադեմիայի նախագահ Հ. Խաչատրյանի խնդրանքին և ՀԱԿԱ-ի ֆոնդին որպես ֆինանսական աջակցություն փոխանցել 150 000 դրամ:

5. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին վերահսկել և արագացնել ուսման վարձավճարների հավաքագրումը:
6. Հավանություն տալ ընդունելության գործընթացին դիմորդներին ծանոթացնելու նպատակով բաց դռների օր կազմակերպելու առաջարկին և առաջիկայում մշակել գործողության ծրագիր:
7. Կերպարվեստի և անիմացիայի ամբիոնի դասախոս Մ. Գարուկյանի հոր մահվան կապակցությամբ հատկացնել համապատասխան գումար ծաղկեպսակ պատվիրելու համար:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան